

բ ա ղ ա բ



Կակուղ, գիշատիչ, սոսնձամածո՞ւկ, թունավոր
շիլա՞, կլլող-պարտակիչ թանձր մեղրախյո՞ւս, չարֆի
շրջանա՞կ, մսակեր ծաղի՞կ՝ թերթիկներն հանկարծ ինձ վրա
փակող, ակվարիո՞ւմ խավար, թե՞ մահապաստառ, թե՞ գորգ
խաբուսիկ՝ փոված ֆառսուն գազ խոր հորի վրա, թե՞...
Էլ ի՞նչ ասեմ, էլ ի՞նչ անուն տամ:

Տես, նրա դեմքին ճանճեր են նստել, այտը չի ցնցվում:
Տես, իմ հայելին ֆթին եմ պահել, և հայելին չի պղտորվում:
Տես, փակ կոպերն եմ բարձրացնում, բիրը շրջված է:
Բայց նա չի մեռել:

Նա ծիծաղում է:

Նա ֆեզ յոթսակ կալմեջ կանի, սևով-սուգով, չարով-
շառով, սառով-սարսափով, բժժանքով ու հմայանքով,
շուտասելուկ-կախարդանքով, աչքակապուկ, ձեռնախփուկ,

գլուխկոտրուկ ցուցուլանքով կդարպասի, կկալանի, թե
թպրտաս՝ կջիգրոտի, կախարդական մահողակում ֆեզ
հուպ կտա, օձի պորտով, հավֆի թևով դուրս չես պրծնի:
Հո՛ւշ, նայում է, փակ աչքերով ֆեզ կգտնի, փակ
շուրթերով կֆրֆչա, որովայնով կմրթմրթա.
«Լավը վատ է, վատը լավ է, վատը լավ է,
լավը վատ է, լավը լավ չէ, վատը վատ չէ...»:

01





Խորթ մայրս ինձ տարավ անտառ՝
մոլորեցնի. ես ուլունֆս շաղ տվեցի իմ
ետևից, լուսնի լույսով հավաքեցի պսպղացող
հատիկները, տունս գտա:

Խորթ մայրս ինձ տարավ հսկա գրադարան՝
մոլորեցնի. հենց առաջին գրքի կազմին
կապեցի թելն իմ բլուզի ու շարֆ առ շարֆ
այն ֆանդելով ու տող առ տող մերկանալով՝
դեգերեցի միջանցքներում կարծր խոսքի, հետո
թելը ետ կծկելով դուրս ելա այդ լաբիրինթից,
տունս գտա:

Խորթ մայրս ինձ տարավ Քաղաֆ՝ մոլորեցնի.
ուլունֆս՝ ցիր, բլուզս՝ պըրծ: Ախպորս ասեմ՝
աչ գնացի, օճախադացն ինձ հմայեց, ինձ
թալանեց, ա՛խ, թալանեց: Ո՛նց նվագեց, իր
նվագով կոկորդիցս շարան-շարան, օղակ-օղակ,
գալար-գալար բառեր հանեց՝ սրտուզելիֆ
գոյականներ, որ հալչում են բերանիդ մեջ,
տվածուրիկ ածականներ, որ կաչում ու պոկ չեն
գալիս, և անուններ անկանչելի, որ հավում են
ֆիմֆիդ հիմֆին, տրոփում են ֆունֆերակում,
բայց չեն ելնում շուրթերից վեր...

Ախպորս ասեմ՝ ձախ գնացի, լարախադացն ինձ
հմայեց, ինձ թալանեց, ա՛խ, թալանեց: Նա
առաձիգ, խմորեղեն իմ մարմնից շարան-շարան,
օղակ-օղակ, գալար-գալար շարժմունք հանեց,
լարանի պես պիրկ ինձ պրկեց, գսպանակեց-վեր
թոցրեց, կամրջակեց-վար իջեցրեց, և առիշեղ և
դիտապաստ և ուղղաձիգ՝ ինձ օրորեց պոունկներին
անդունդների, ինձ օրորեց...

Ախպորս ասեմ՝ վերև ելա, աստղը խփեց, ներքև իջա,
ֆարը ծեփեց, խոտը դաղեց, ջուրը կծեց: Ես մնացի՝
ձեռն ծոցիս, վիզս ծուռ, տեղս դժար, տունս մութ,
աչքս բաց, լեզուս խուփ, ձեռնս կարն, ոտս թուլ, սիրտս
պաղ, հոգիս խուլ, վարքս ճապաղ, միտքս սուղ...
Ջրաբերուկ-ֆամուֆշիկ, պսակալույծ-խառնակեցիկ,
շվար-մոլոր տապ արեցի մայր Քաղաֆում...

- Երևի ֆաղաֆը մե՛ծ էր:

- Ինչ մեծ, թե հերթագայող սիրեկաններդ չեն կարող
լինել իրար անծանոթ:

- Երևի սիրեկանները ֆի՛չ են և նշան-ավոր:

- Ինչ նշան-ավոր, եթե բոլորը նույն դեմքն են կրում
և նույն հագուստը և նույն դրոշմը գառամյալ ցեղի, և
ինչ ֆիչ, եթե ջրի ափ գնան ծարավ կոտրելու, գետ
կցամափ:

- Երևի գետը ծանծա՛ղ է:



- Ինչ ծանծաղ, եթե խորհում
թաղված է մի ամբողջ աշխարհ...
Հագար-հագար կույս աղչկա սրտիկ՝ շարված մի թելի,
որ տրոփում են միևնույն հանգով ու դողանջում են
կիրթ, բարձրադնիկ և փականները բաց-խուփ անելով՝
սիրո թափանցիկ արյունն են մղում գետերակներին...
Եվ հագար-հագար բեղուն ծննդկան լեցուն կրծքերն
են հպում ջրերին, հոխ պտուկները սեղմում երախին
ջրանձալների, ստորջրային սահանքին խառնում կենաց
կաթնաշիթ, ոռոգում դաշտը ջրիմուռների...
Եվ հագար-հագար ուսյալ հետերա, որ գերազանցիկ,
վիրտուոզ գալարմամբ ազդրերն են փում
սլուն-տարանցիկ ձկնավտառին, ելևէջում են
մակընթացության-տեղատվության նվաղիտ ուժով
ու ներֆաշում են իրենց բացվզիկ, ամենակլիկ
արգանդների մեջ բույլը ինֆնամփով, համր խեցիների՝
ի խույզ մեկուկիկ, միակ մարգարտի այն թափնակեցիկ,
որ բաց կազատվի իրենց ներսերից՝
օծված հյութերով հեշտանփահուսի...
Եվ հագար-հագար կաթիլների մեջ, իր արցունքների
գետի խորքերում, ներմակ ամրոցում ներմակ աղջիկն
է անդադար լալիս՝ Քաղափի վրա, որ շահած տոմս
էր վիճակախաղի, և ֆամին տարավ, որ տղայամիտ
օղապարուկ էր երկինքաբնակ, այրվեց-մոխրացավ,
որ հող էր, հոծ էր և անթափանցիկ, թաղվեց
ջրերում... Որ ֆամին տարավ, այրվեց-մոխրացավ,
թաղվեց ջրերում...

Տ
Կ
Պ
Ր
Ե
Մ
Ե
Փ
Կ
Ն
Փ
Մ
Ս
Ի



Տ ա ս ն վ ե ց ե ռ ո թ ղ

հարկի


04

ճաղատ ճգնակյացը գուգարանի ջուրը փաշեց
ու մարեց լույսը: Եվ մթության մեջ լափին տալով, բլթբլթալեն,
բլթբլթոցով, դարիվ-դարիվ իջնում է, հարկ-հարկ իջնում է, տուն-տուն
իջնում է Արտաֆայան ամենայնի՝ արտաթորանք, ձեռնաշարժված սերմը,
մեխած կերակուրը, անասելի բառը, հարբածի փսիտուքը, կնոջ ավելցուկ արյունը,
մեռելածին կատվաճագը, չկանչված անունը, ճաղատի գաղտնիքը... Իջնում է
հարկ-հարկ, իջնում է տուն-տուն, սահանք առ սահանք, պտույտ առ պտույտ,
բլթբլթալեն, խլթխլթոցով իջնում ու կոյուղու սփռոցով
մերժո ու բշտիկներն է
տեղ-տեղ պայթեցնում գիշերվա ողորկ, լերկ
գանգամաշփին...






Ահ, առավոտյան ո՞վ առաջինը ոտքը կդնի
 ականապատված այս հարթակներին, ո՞վ իր մոլեգին
 սրտի փեղկերը բաց կանի շոինդ՝ կանխիկ
 հրնվանքին ինքնամատուցման, ո՞վ իր տոմսակը
 շուայլ կուրանա վիճակահանության հենց
 նախօրեին...



Տես, արվարձանից ձայներ են գալիս,
 այդ աղետագուժ պոմպեոսին է հոսում
 ընդառաջ, հեռում ծուխ ու մուժ,
 մագերը՝ լավա, աչքերը՝ ծծումբ,
 ձայնը՝ նայադի, հոգին՝ չարադյութ...
 Մի՛ լսիր նրան, իմ սրտով սիրած,
 փակի՛ր աչքերդ, իմ մարմնով
 ընտրած, ես քեզ համար մի
 թափուն տուն ունեմ իմ դեռ
 չարարված ամենափառալուստ
 թույն-համբույրի մեջ, մենք պահ
 կմտնենք իմ հիշողության խուլ
 ձեղնահարկում, այդ կացարանը
 ամենաուժեղ պայթյունից անգամ
 ցրիվ չի գալու...



Ախշի Վիոլետ,

չըլնեմ-չիմանամ՝ ֆիթդ դոնից դուս հանես,
Բոբոն ֆիթդ կկրծի,

չըլնեմ-չիմանամ՝ ոտքդ հողին դիպցնես,
հողը ոտքդ կկրծի,

չըլնեմ-չիմանամ՝ սիրտդ մարդու վստահես,
մարդը սիրտդ կկրծի:

Ախշի Վիոլետ,

չըլնեմ-չիմանամ՝ հարըոգես ու թիթիզանաս՝
տուտուց-տուտուց, սուտի-մուտի,

աչքիդ թայը կհանեն,

չըլնեմ-չիմանամ՝ տխրես, էթաս ու ճրի տաս
ինչ-որ բլոն-շերեփուկի,

ամա՛ն, մուխդ կմարեն,

չըլնեմ-չիմանամ՝ մեյդան ընկնես,

վեր-վեր թռչես էս Քաղաքում,

կարո՞ղ ա գիտես՝ ծնունդդա,

կարո՞ղ ա գիտես՝ թեկնածու ես,

կարո՞ղ ա գիտես՝ չորս տուգ ունես,

կարո՞ղ ա գիտես՝ կուսակից ես,

կարո՞ղ ա գիտես՝ գարուն ա էկե...

Վիոլետիկ, հիմար աղջիկ, անպետք աղջիկ,

թերի, պուտ ու անօժիտ,

բացֆամակ ու դալի-դոլի,


խելքդ գլուխդ հավաքի,

տիտիկ արա, մեկին կապի,

մարդու գնա հեռո՛ւ կղզի,

տանը նստի,

իւրի մանի



Մանուկ է

կույս Արփենիկը, բոգոտ Կառան թելն է կծկում,
չքեր Նունեն կտրում է այն:

Շոագլուխ, վեցձեռնանի ֆաղափապետ՝ ցանկալի էգ
— հար սիրուհի, տանու կնիկ — հուլ ֆրիգիդ,
հերմաֆրոդիտ՝ դախ, զարհուրիկ:

Մի գլուխը խնդում է, մյուսը՝ լալիս, էն մեկելը ձեն
չի հանում, լուռ նայում է:

Մի գլուխը երգում է, մյուսը՝ ոռնում, էն մեկելը
ձեն չի հանում, լուռ նայում է:

Մի գլուխը թփում է, մյուսն՝ համբուրում, էն մեկելը

— ձեն չի հանում, լուռ նայում է:

Մեկը մանում է, մյուսը կծկելիս խաղեր է տալիս,
թելը ձգում ու տանում է ապա ձախորդության
միջով, «Պապլավոկի» միջով, ընտրությունների,
աղետյալ արվարձանների, նաիրուհիների
ետաքրտյան թախծի,

Դուկա-Պիցցայի, սիրելի և կյանքում անմոռանալի

պրեզիդենտի, պոետների հիստերիկ խրախմանֆի,
կակուղ տղաների, դեկորատիվ կուսակցությունների,
ընդմիշտ կոկա-կոլայի, Երևանի սիրուն աղջկա,
Արգիշտիի գառանցանֆի, թատերական մուրացկանների,
«հայ եմ ես, հայ ես դու»ի, ֆաղափական
մանկապարտեզների, «Բրաբիոն-Ֆլորա սերվիս»ի,
կլիմակտիկ կղերականների, բազմազավակ
լարախաղացների, իրենք իրենցից փախստականների
միջով...

էն մեկելը թելն է կտրում:



Կարմիր արևից ընկած Քաղաք ջան,
կանաչ տերևից ընկած Քաղաք ջան,
փամուց ու ջրից փշված Քաղաք ջան,
նախշուն շորավոր,
պուրպուր գուլավոր Քաղաք ջան,
մատնիք մատիդ,
բալնիք մակտիդ Քաղաք ջան,
մեղալը դռնիդ,
աստղերը ուսիդ Քաղաք ջան,



թագահարս Քաղաք ջան,
թագը գագաթիդ,
թագավոր Քաղաք ջան,
թվանգը մեջքիդ,
գեներալ Քաղաք ջան,
ո՞վ քեզ չար աչքով տվեց,
ո՞վ քեզ թուղթ ու գիր արեց,
փետուրներիդ սար ու ձոր,
ոսկորներիդ փար ու չոլ շաղ տվեց,
արեգակ էիր, խավարեցիր, Քաղաք ջան,
մանիշակ էիր, թառամեցիր, Քաղաք ջան,
ուշացա, ձենիդ չհասա,
ծուլացա, վայիդ չհասա,
հիմա ինչքան էլ հարայ տամ,
կուրծք ծեծեմ, մագերս փետեմ,
էլ վրեդ մեր ու քուր չի գա,
ա՛խ, վրեդ մեր ու քուր չի գա,

վա՛խ, վրեդ մեր ու քուր չի գա:

Բանի՛ էջ այս աղետագուժ բանաստեղծությունն
 ընդառաջ հոսեց, հագագը՝ վառման, հեֆը՝
 ծալծալուկ, սրտիկը՝ ելման, հոգին՝ վկայուկ...
 Բանաստեղծություն ջան, բանաստեղծություն,
 միակ իմ օժիտ, շտապ օգնություն-բուժֆույր
 սրսկիչ, կինոյի վերջում հայտնված փրկիչ,
 իսկական սիրած-իմ մապուկ կովբոյ, վարժ
 ձիախաղաց-ամերիկբն բոյ, հուզիչ դեկաբրիստ,
 անմեռ սուպերմեն, բառի ֆիդայի, իմ պրեզիդենտ...
 Քիչ էլ դիմացիր, մի Բանի տող ու... ես Բեզ
 կավարտեմ:

Թե խորթ մայրս ինձ մեղացնի, լաց չեմ լինի,
 հուշիկ կգամ, կողքդ մստեմ,
 թե «Պապլավոկն» ինձ մեղացնի, լաց չեմ լինի,
 կակուղ տղան ինձ մեղացնի, լաց չեմ լինի,
 Դոկա-Պիցցան ինձ մեղացնի, լաց չեմ լինի,
 պրեզիդենտն ինձ մեղացնի, լաց չեմ լինի,
 կոկա-կոլան ինձ մեղացնի, լաց չեմ լինի,
 մադատ ցոանն ինձ մեղացնի, լաց չեմ լինի,
 կուսակցությունն ինձ մեղացնի, լաց չեմ լինի,
 շերեփուկը ինձ մեղացնի, լաց չեմ լինի, հուշիկ
 կգամ, կողքդ մստեմ, միֆիթարիչ շնչիդ մերֆո՛
 լուռ, ընտանի, խելոֆ սանիկ, գերագանցիկ...



Ու կպառկեմ քո էջերին, պահ
 կմտնեմ տողատակիդ
 նկուղներում, կացարանում
 քո բառերի, վերնագրիդ
 ձեղնահարկում,
 խորդանոցում սևագրիդ...
 Մենք երկուսս էլ մորեմեկ
 ենք կամ հորեջուկ՝ երկու
 որբեր, քուր ու ախպեր, բայց
 կդառնանք մարդ ու կնիկ, իրար
 գլխի ամպիռվանի ու իրար մեջ
 ընդելուզված՝ կապրենք սիրով արնապիղծ
 ու ամոթապարտ, սեռադարտիչ-ախտավարակ,
 այլամերժ ու ինքնահերիք, պսակալույծ-



10

խառնակեցիկ, ջրաբերուկ-ֆամուշիկ, մեկ մաշկի մեջ,

մեկ մարմնում՝ մենք

գուգաճույլ-հերմաֆրոդիտ...

Եվ առավոտյան մենք մեր մուկգին սրտի փեղկերը բաց կանենք շոինդ՝
 կանխիկ հրմվանքին ինքնամատուցման, ու մեր տոմսակը շույլ կուրանանք
 վիճակահանության հենց նախօրեին և առաջինը մե՛նք մեր միաճույլ ոտքը
 կդնենք ականապատված այս հարթակներին ու թափնվելով ամենափայլուն
 թույլ-համբույրի մեջ՝ կպայթենք մեկեմ ու հողմացրիվ-բշտիկ շարավե՛
 ֆաղափի ողորկ,

Լ ե ռ կ գ ա ն գ ա մ ա շ կ ի ն . . .

գրքի ձեզվավորում և շապիկի լուսանկար՝ իշխան Ճինպաշեան
 հայաստանեան լուսանկարներ՝ արթուր չոլաքեան

տպագրություն՝ մայիս 1998, լոս անջելես, ամն

© 1998, վիոլետ գրիգորյան - հեղինակային բոլոր իրավունքները վերապահված

բ ա ղ ա բ



ՎԻՈՒԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

